ContourGlobal
Հիդրո կասկադ

ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ
**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն թիվ 3**

**Հայտերի տեխնիկական գնահատման նիստի**

---

**«Տաթև ՀԷԿ-ի համար երկու նոր 80ՄՎԱ-110/10.5 կՎտ տրանսֆորմատորների նախագծման, արտադրության, մատակարարման, տեղադրման և շահագործման հանձնման» աշխատանքների ձեռքբերման համար** ստացված տեխնիկական հայտերի գնահատման նիստի

---

Գնման ծածկագիրը - **ՔԳՀԿ 04/25**
Գնման տեսակը - **բաց մրցույթ**
Գնումը ներառված է ՔԳՀԿ 2025-2027թթ. ներդրումային ծրագրում 4-րդ հավելվածում

2025թ. օգոստոսի 28-ին, Ժամը՝ 17:45-ին

**Minutes of Technical Evaluation 3**
for Bid Evaluation Committee Meeting to Evaluate Technical Proposals received for Design, manufacture, supply, installation and commissioning of two new 80MVA -110/10.5 kV transformers for Tatev HPP of ContourGlobal Hydro Cascade CJSC
RFP reference number: CGHC 04/25

*28 August 2025, 17:45*

| Մասնակցում էին՝ | Participants |
|---|---|
| Հանձնաժողովի անդամներ՝<br>Արամ Յոլյան<br>Արամ Մելքումյան<br>Գավրուշա Աթայան<br>Սմբատ Մկրտչյան<br>Արսեն Դաջունց<br>Վարդգես Հովսեփյան<br>Հայկ Ղազարյան | Evaluation Committee Members:<br>Aram Yolyan<br>Aram Melkumyan<br>Gavrusha Atayan<br>Smbat Mkrtchyan<br>Arsen Dajunts<br>Vardges Hovsepyan<br>Hayk Ghazaryan |

| | |
|---|---|
| Սևակ Սուրենյան<br>Արմինե Մանուկյան | Sevak Surenyan<br>Armine Manukyan |
| Հանձնաժողովի քարտուղար՝<br>Արման Պետրոսյան | Secretary of Committee:<br>Arman Petrosyan |

| Նշումներ | Comments |
|---|---|
| Արման Պետրոսյանը տեղեկացրեց գնահատող հանձնաժողովի անդամներին, որ մրցույթային մասնակիցներից պահանջված պարզաբանումները ներկայացվել են և այնուհետև տրամադրվել հանձնաժողովին՝ վերջնական գնահատման համար: | Arman Petrosyan informed evaluation committee members that the requested clarifications from bidders had been submitted and were subsequently distributed to the committee for their final assessment. |
| Գնահատող հանձնաժողովը ծանոթանալով ներկայացված տեխնիկական առաջարկներին և, հիմք ընդունելով տեխնիկական առաջարկների գնահատման չափանիշներում նշված 1.3 Հայտատուի ֆինանսական կարգավիճակը՝ պահանջվող նվազագույն միջին տարեկան շրջանառության (եկամուտի) չափանիշը՝ 30,000,000 ԱՄՆ դոլար 2024, 2023 և 2022 թվականների համար, նշեց որ հետևյալ երկու ընկերությունները որակազրկվում են՝<br>Ընկերությունների միջին տարեկան շրջանառությունը կազմում է.<br>• «Գլոբալ Էներջի Գրուփ» ՍՊԸ-10,233,756 ԱՄՆ դոլար<br>• «Փաուեր Էներջի» ՍՊԸ-8,498,736 ԱՄՆ դոլարին համարժեք<br><br>Հիմք ընդունելով վերոգրյալը «Գլոբալ Էներջի Գրուփ» ՍՊԸ-ի և «Փաուեր Էներջի» ՍՊԸ-ի հայտերը որակազրկվում են, համարվում են անպատասխան և մերժվում են:<br>Նշված ընկերությունների հայտերը չեն ընդգրկվի տեխնիկական գնահատման գործընթացում: | The evaluation committee got acquainted with the submitted technical proposals and based on 1.3 Financial Standing of the Bidder' criteria outlined in the Evaluation of technical proposal section the following two companies have been disqualified as not meeting the requirement of minimum average annual turnover (revenue) of USD 30,000,000 over 2024, 2023, 2022.<br><br>The average annual turnover for the companies is:<br>• Global Energy Group LLC- USD 10,233,756<br>• Power Energy LLC- equivalent to USD 8,498,736<br><br>Taking into consideration the above-mentioned the bids of Global Energy Group LLC and Power Energy LLC are disqualified considered as non-responsive and rejected.<br>The proposals of these companies will not be taken into consideration for technical evaluation. |
| **Հենան Դինգլի Փաուեր Էքուիփմենթ Կո**-ի կողմից ներկայացված հայտի գնահատման ժամանակ հանձնաժողովի անդամները նշեցին, որ չնայած նրան, որ տեխնիկական առաջարկը ներկայացվել է, սակայն այն մանրամասնած չէ խորը գնահատման համար:<br>Առաջարկվող սարքավորումների մանրամասն տեխնիկական նկարագրությունները, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գործիքները և | During the assessment of bid submitted by **Henan Dingli Power Equipment Co.,** committee members noted that: Even though that the technical proposal submitted, however it is not detailed for deep assessment.<br>Detailed technical descriptions of the proposed equipment, tools required for the contract execution and transformer design and CVs of proposed qualified staff are partially provided. |

| | |
|---|---|
| տրանսֆորմատորի գծագիրը ներկայացված են մասամբ: Հատուկ փորձարկումները իրականացվելիք մասնագիտացված լաբորատորիայի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև Որակի ապահովման/Որակի վերահսկման մեխանիզմները ներկայացված չեն: Ներկայացրած փորձը, շրջանառության ցուցանիշները համապատասխանում են մրցութային փաթեթի պահանջներին: Ընդհանուր առմամբ ընկերությունը բավարարում է մրցութային փաթեթի պահանջը: | Information about the specialized laboratory where the special tests will be performed and QA/QC concept are not provided.<br><br>The provided experience, turnover figures comply with the RFP requirements.<br>Generally the company satisfies the requirement of RFP. |
| **Սիմենս Էներջի ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի գնահատման ժամանակ հանձնաժողովի անդամները նշեցին, որ չնայած նրան, որ տեխնիկական առաջարկը ներկայացվել է, սակայն այն մանրամասնած չէ խորը գնահատման համար: Պայմանագրի կատարման պլանը, առաջարկվող որակավորված աշխատակազմի կենսագրականները, օգտագործվող նյութերի, սարքավորումների, պարագաների, սերտիֆիկատների նկարագրությունը, տվյալների և շահագործման հրահանգների կատալոգը ներկայացված են մասամբ: Բնապահպանական, սոցիալական, առողջապահության և անվտանգության ծրագիրը, արտադրական գործարանից մինչև Տաթև ՀԷԿ տեղափոխման լոգիստիկ պլանը, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ սարքավորումների և գործիքների ցանկը, ինչպես նաև տեղեկություններ այն մասին, որ վերջին երեք տարիների ընթացքում նմանատիպ տրանսֆորմատորներ արտադրվել, մատակարարվել և շահագործման են հանձնվել տեղեկատվությունները ներկայացված չեն: Ներկայացրած շրջանառության ցուցանիշները համապատասխանում են մրցութային փաթեթի պահանջներին: Ընդհանուր առմամբ ընկերությունը բավարարում է մրցութային փաթեթի պահանջը: | During the assessment of bid submitted by **Siemens Energy LLP** committee members noted that: Even though that the technical proposal submitted, however it is not detailed for deep assessment. Contract execution plan, CVs of proposed qualified staff, description of materials used, equipment, accessories, certificates, the catalogue of data and operating instructions are partially provided.<br><br>Information about the Environmental, Social Health and Safety Plan, logistic plan for transportation from the manufacturing plant to Tatev HPP, list of equipment and tools required for the contract execution information testifying that in the past three years similar transformers have been manufactured, delivered, and commissioned are not provided.<br><br>The provided turnover figures comply with the RFP requirements.<br><br>Generally the company satisfies the requirement of RFP. |
| Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին **Համատեղ գործունեություն Էլփրոմ Հեվի Ինդաստրիս ՓԲԸ և «ՀԷՄ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը և արձանագրեցին, որ համատեղ գործունեությունը որակավորված է և բավարարում է մրցութային փաստաթղթերով նախատեսված բոլոր պահանջները: | The committee members reviewed bid submitted by **Joint Venture Elprom Heavy Industries JSC with HEM LLC** and agreed that the joint venture is qualified and met with all requirements stipulated in the bidding documents. |

| | |
|---|---|
| Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին **Կոնչար Էլեկտրիկալ Ինդաստրի ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը և արձանագրեցին, որ կազմակերպությունը որակավորված է և բավարարում է մրցութային փաստաթղթերով նախատեսված բոլոր պահանջները: | The committee members reviewed bid submitted by **Koncar Electrical Industry Inc** and agreed that the company is qualified and met to all requirements stipulated in the bidding documents. |
| Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին **Անդրից Հիդրո ՍՊԸ Սթի**-ի կողմից ներկայացված հայտը և արձանագրեցին, որ կազմակերպությունը որակավորված է և բավարարում է մրցութային փաստաթղթերով նախատեսված բոլոր պահանջները: Այնուամենայնիվ, Որակի ապահովման/Որակի վերահսկման մեխանիզը ներկայացված չէ: | The committee members reviewed bid submitted **ANDRITZ HYDRO Ltd. Sti** and agreed that the company is qualified and met to all requirements stipulated in the bidding documents.<br>However, QA/QC concept is not provided. |
| Հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին **Մաթելեք ՍԱԼ**-ի կողմից ներկայացված հայտը և արձանագրեցին, որ ընկերությունը որակավորված է և բավարարում է մրցութային փաստաթղթերով նախատեսված բոլոր պահանջները: | The committee members reviewed bid submitted by **MATELEC SAL** and agreed that the company is qualified and met with all requirements stipulated in the bidding documents. |
| Գնահատող հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված տեղեկատվությունը և նշեցին, որ վեց հայտատուները բավարարում և համապատասխանում մրցութային փաթեթի պահանջներին: Ելնելով դրանից՝ նրանք գնահատեցին յուրաքանչյուր Հայտը՝ համաձայն Տեխնիկական առաջարկների գնահատման չափանիշների հետևյալ կերպ.<br>• Համատեղ գործունեություն Էլփրոմ Հեվի Ինդաստրիս ՓԲԸ և «ՀԷՄ» ՍՊԸ-94 միավոր,<br>• Մաթելեք ՍԱԼ -88 միավոր,<br>• Կոնչար Էլեկտրիկալ Ինդաստրի ՍՊԸ-88 միավոր,<br>• Սիմենս Էներջի ՍՊԸ-82 միավոր,<br>• Անդրից Հիդրո ՍՊԸ Սթի -82 միավոր,<br>• Հենան Դինգլի Փաուեր Էքուիփմենթ Կո-71 միավոր: | The committee members reviewed submitted information and noted that six bidders met and comply with the RFP requirements. Based on that they have scored each proposal according to the evaluation of Technical Proposals criteria of the RFP as follows:<br>• Joint Venture Elprom Heavy Industries JSC with HEM LLC- 94 points,<br>• MATELEC SAL- 88 points,<br>• Koncar Electrical Industry Inc- 88 points,<br>• Siemens Energy LLP- 82 points,<br>• ANDRITZ HYDRO Ltd. Sti- 82 points,<br>• Henan Dingli Power Equipment Co.-71 points. |
| Գնահատող հանձնաժողովը որոշեց.<br>Ա) Ծանուցել այն հայտատուներին ում առաջարկները չեն համապատասխանել մրցույթի պահանջներին և որակազրկվել են, որ ֆինանսական առաջարկի բացման ժամանակ իրենց հայտերը հաշվի չեն առնվելու՝ մրցութային փաթեթի 5.2 2), 6.7 and 6.10 կետերի համաձայն: | The evaluation committee decided:<br>A) Notify those bidders whose bids were disqualified and did not meet the requirements of RFP that during the opening of the financial proposals their bids will not be taken into account, in accordance with clauses 5.2 2), 6.7 and 6.10 of the RFP. |

| | |
|---|---|
| Բ) Հրավիրել վեց կազմակերպություններին հեռահար առցանց ֆինանսական առաջարկի բացմանը մեկ շաբաթվա ընթացքում, և ուսումնասիրել ֆինանսական առաջարկները՝ ամբողջական համապատասխանության կտրվածքով, որ դրանք համապատասխանում են մրցութային փաստաթղթին: | B) Within a week invite six companies to a remote online procedure of financial proposal opening and examine Financial Proposals for completeness and compliance with the RFP document. |

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների միաձայն համաձայնվեցին առաջարկներին:
The present committee members unanimously agreed with the proposals.

| | | |
|---|---|---|
| Committee chair<br>Հանձնաժողովի նախագահ | Արամ Յոլյան | box SIGN 4Z2KV994-4KKVZPJ6 |
| Committee members<br>Հանձնաժողովի անդամներ՝ | Արամ Մելքումյան | Aram Melkumyan<br>box SIGN 4Z73PZK1-4KKVZPJ6 |
| | Գավրուշա Աթայան | box SIGN 469RY921-4KKVZPJ6 |
| | Սմբատ Մկրտչյան | box SIGN R1V2PWJ1-4KKVZPJ6 |
| | Արսեն Դաչունց | box SIGN 4Z7JL981-4KKVZPJ6 |
| | Վարդգես Հովսեփյան | box SIGN 5153VYZ1-4KKVZPJ6 |
| | Հայկ Ղազարյան | box SIGN 19K3XY3Y-4KKVZPJ6 |
| | Սևակ Սուրենյան | box SIGN 18R9VPJ1-4KKVZPJ6 |
| | Արմինե Մանուկյան | box SIGN 4YPQ7PR1-4KKVZPJ6 |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Արման Պետրոսյան | box SIGN 13XV3ZQ4-4KKVZPJ6 |